«ԷյԴիԱր Փարթներս» ընկերությունը, հանդիսանալով Հայաստանում առաջին մեդիացիոն ընկերությունը, առաջարկում է հետևյալ մասնագիտական դասընթացները.

➢ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանակցություններ դասընթացի մասնակիցները կստանան ***տեսական և գործնական գիտելիքներ*** բանակցություններ վարելու հիմունքների վերաբերյալ, կտիրապետեն բանակցելու ***տեխնիկային և մեթոդներին***, առաջարկ կատարելու հնարքներին, շահերի և դիրքորոշումների առանձնահատկություններին, ինչպես նաև հնարավորություն կունենան ապրոբացիայի ենթարկել իրենց գիտելիքները ***գործնական վարժությունների*** ընթացքում: Դասընթացի ծրագիրը ներառում է նաև ***խմբակային բանակցությունների***, ինչպես նաև ***հեռախոսային և էլեկտրոնային փոստով*** բանակցություններ վարելու հմտությունների ուսուցում:

➢ ՄԵԴԻԱՑԻԱ

Մեդիացիայի դասընթացների մասնակիցները հնարավորություն կունենան ստանալ ***տեսական և գործնական գիտելիքներ*** մեդիացիայի՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային մեթոդի վերաբերյալ: Դասընթացների ընթացքում կդիտարկվեն մեդիացիայի ***հասկացությունը և սկզբունքները***, մեդիացիոն տարբեր մոտեցումները, կառուցվածքը և նպատակը, ***մեդիացիայի առավելությունները և թերությունները***, մեդիատորի դերը, ինչպես նաև մեդիացիայի կանոնները և էթիկայի նորմերը, մեդիացիայի ***օրենսդրական կարգավորումները***: Դասընթացների մասնակիցները հնարավորություն կստանան ***գործնական վարժությունների*** ժամանակ ուսանել մեդիացիայի հմտությունները և տեխնիկան:

➢ ԱՐԲԻՏՐԱԺ

Արբիտրաժի դասընթացների մասնակիցները բացառիկ հնարավորություն կստանան ծանոթանալու ***արբիտրաժի իրավական բնույթին***, այդ թվում՝ արբիտրաժի և արբիտրաժային վարույթի առանձնահատկություններին, ***գործերի ընդդատության*** առանձնահատկություններին, արբիտրաժային համաձայնությանը, ***միջազգային առևտրային արբիտրաժի*** ընթացակարգային առանձնահատկություններին, միջազգային և ազգային իրավական աղբյուրներին, ինչպես նաև արբիտրաժի վերաբերյալ ***Հայաստանի և Մեծ Բրիտանիայի օրենսդրական կարգավորման*** առանձնահատկություններին:

Դասընթացները կվարեն մեր ընկերության միջազգային որակավորում ունեցող մեդիատորներն ու արբիտրները, որոնց կենսագրականներին կարող եք ծանոթանալ այստեղ՝ http://www.adr.am/mediators/eng:

Եթե ցանկանում եք մասնակցել դասընթացներին կամ ստանալ հավելյալ տեղեկություններ, ապա ուղարկեք Ձեր հայտը մեր էլ. փոստին ***info@adr.am***՝ *նշելով Ձեր հեռախոսահամարը կամ զանգահարելով՝* ***098 88 17 20*** *հեռախոսահամարով:*